

ՀՏԴ՝ 902.03

DOI: 10.52971/18294316-2021.2-57

**ԶՈՐԱՑ ՔԱՐԵՐ ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2014-2018 ԹԹ.)**

Աշոտ Փիլիպոսյան

ՀՀ ԿԳՄՄՆ պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության ծառայություն

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, Ձորաց քարեր, մեգալիթներ,
բնակատեղի, դամբարանադաշտ, Հին Մերձավոր Արևելք:

Ձորաց քարեր հնավայրը, որպես մեգալիթյան հուշարձան, առանձնակի դեր ու նշանակություն ունի Հայաստանի հնագիտության համար: Շուրջ մեկ հայրյուրամյակ այստեղ կատարվող սիրողական, նաև մասնագիտական հետազոտությունները բազմաթիվ խնդիրներ են առաջ բերել, որոնց համակողմանի վերհանման, հետազոտման, մեկնաբանման ու ներկայացման համար կարևոր են ինչպես հնագետների, այնպես նաև այլ մասնագիտությունների (պատմաբաններ, արևելագետներ, բանագետներ, աշխարհագրագետներ, հնամարդաբաններ, երկրաբաններ, հանքաբաններ, ճարտարապետներ, ֆիզիկոսներ, աստղագետներ և այլն) տեր մարդկանց համատեղ ու համակարգված աշխատանքների արդյունքները: Սույն հոդվածը ներկայացնում է Ձորաց քարեր հնավայրի դամբարանադաշտի հատվածում 2014-2018 թթ. իրականացված պարբերական պեղումների նախնական արդյունքները

Նախաբան. ՀՀ հարավի հնագիտական հուշարձաններում առանձնանում է մ.թ.ա. III-I հազ. վերաբերող մեգալիթյան մի հնավայր, որը հայտնի է Դիք-դիք կամ Ցից-ցից

քարեր, Ջորաց քարեր, Քարեգորք, վերջերս նաև «Քարահունջ» անվանումներով:¹ Այն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքից մոտ 3 կմ հյուսիս, ծովի մակարդակից 1770 մ բարձրությամբ սարահարթում՝ Որոտանի Դառը վտակի ձախակողմյան հրվանդանի վրա (*Աղ. 1*): Աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 39°33'02.52"-ը և ավ. երկ. 46°01'42.96"-ը: Հուշարձանն առանձնանում է իր ընդհանուր տեսքով, անառիկ դիրքով և հատկապես ուղղահայաց կանգնեցված հսկա, մասամբ անցքավոր քարաբեկորներով: Ըստ ժողովրդական ավանդազրույցների՝ տեղում առկա քարակույտերի մեջ գորավարներ, իսկ ուղղահայաց կանգնեցված հսկա ժայռակտորների տակ զինվորներ են թաղված:² Այս պատճառով էլ ստացել է Ջորաց քարեր անունը: XIX դ. վերջից առ այսօր հնավայրն առանձնակի հետաքրքրության տարածք է պատմաբանների ու ճարտարապետների³, հնագետների⁴, անգամ աստղագետների ու ֆիզիկոսների⁵ համար: Այսուհանդերձ, մինչ օրս հնավայրը մասնագիտական առումով ամբողջապես ու համակողմանի ուսումնասիրված չէ, ինչն էլ նրա վերաբերյալ բազում հակասական, իրարամերժ, նաև անհավանական մեկնաբանությունների առիթ է տալիս:

Քննարկվող տարածքի մասին մեզ հասած ամենավաղ տեղեկությունները պահպանվել են Վանի թագավորության (Ուրարտու) տիրակալներ Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.), Արգիշթի II-ի (մ.թ.ա. 714-685 թթ.) և Ռուսա II-ի (մ.թ.ա. 685-645 թթ.) սեպագիր տեքստերում:⁶ Սրանք թեև ուղղակի տվյալներ չեն տալիս Ջորաց քարերի մասին, սակայն կարևոր տեղեկատվություն են պարունակում տարածաշրջանի մ.թ.ա. VIII-VII դդ. գործընթացների մասին: Ավելին. մ.թ.ա. VIII դ. երկրորդ կեսին Սարդուրի II-ի կողմից քննարկվող տարածքից տարված 8525 գլուխ խոշոր և 18000 գլուխ մանր եղջերավոր անասունների, գերեվարված 3500 պատանիների, 15000 կանանց և 4000 զինվորների մասին վկայությունները փաստում են տեղում կայուն տնտեսություն, մարդկային ու ռազմական լուրջ ներուժ ունեցող ցեղային միության, գուցե և վաղպետական կազմավորման գոյության մասին:

¹ Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան-1991, էջ 575: Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան-2001, էջ 323, 669:

² Ղանալանյան-1969, էջ 263, 270:

³ *Меликь-Шахназаровь*-1892, էջեր 124-127, նկ. 9-10: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում հնագետ Արսեն Բորոխյանին այս աղբյուրը տրամադրելու համար: Մ. Բարխուդարյան-1960, էջ 122: Լիսիցյան-1969, տախտակ CXIV: Ադոնց-1972, էջ 11: Հասրաթյան-1985, էջ 175: Հարությունյան-1992, էջ 13:

⁴ Լալայան-1931, էջեր 63, 66, նկ. 14: Եսայան-1972, էջ 65: Խնկիկյան-1984: *Xnkikyan*-2002, pp. 9, 25-29, 60-61, 65-67, 148, 167, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9; Ավետիսյան, Գնունի, Բորոխյան Սարգսյան-2015, էջեր 57- 60, նկ. 13-15, աղ. 24, 36-39, 46: Փիլիպոսյան, Ավագյան-2016, էջ 3-20:

⁵ Զ. Парсамян-1985. Հերունի-1998, էջեր 87-93: Геруни-1998, сс. 307-328.

⁶ *Меликишвили*-1960, 273-275. Հարությունյան 93-104: *Арутюнян*-1983, с. 195-229. Գայսերյան-1986, էջ 67-79: *Арутюнян*- 2001, сс. 227-229. Փիլիպոսյան-2016, էջեր 18-20: *Piliposyan*-2019, pp. 439-446.

Ջորաց քարերում հնագիտական աշխատանքները վերսկսվեցին 2014 թ. ՀՀ մշակույթի նախարարության «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից (արշավախմբի պետ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյան): Նախնական ուսումնասիրությունները մեկ անգամ ևս հաստատեցին հնավայրի տարածքում բնակավայրի և նրան անմիջապես կից դամբարանադաշտի գոյության փաստը: Բնակավայրը զբաղեցնում է հուշարձանի հյուսիսային հատվածը, հարավային և արևմտյան կողմերից շրջափակված է մինչև 2,0 մ բարձրությամբ կոպտաշար պարսպապատով, որը տեղ-տեղ համալրված է որմնահեցերով: Հարավային կողմում ունի մուտք:

Հրվանդանի հարավային հատվածում գտնվող դամբարանադաշտը սփռված է նաև դրանից ցած՝ դեպի հարավ և արևմուտք: Հնում արդեն թալանված դամբարանների քանակն անցնում է վեց տասնյակից: Դրանց մասամբ պահպանված կառույցներն այսօր էլ շրջափակված են ամբողջական կամ թերի կրողլեխներով և կենտրոնում արևելք-արևմուտք դիրքով գետնափոր, քարակղային խցեր ունեն, որոնց մի մասի երկարությունը հասնում է մինչև 15.0, իսկ լայնքը՝ 4.5 մետրի:

Մրանց կառուցման համար անհրաժեշտ շինանյութը բերվել է հնավայրից մոտ 1,0 կմ արևելք գտնվող քարհանքից: Այստեղ, շուրջ 3,5 հազար տարի առաջ առանձնացվել են բազալտե մեծ քարաբեկորներ, որոնք ունեցել են զանգվածեղ հիմք և նեղացող վերնամաս: Դյուրին տեղափոխման համար, դրանցից յուրաքանչյուրի նեղ եզրին երկկողմանի մշակման եղանակով 5.0-10.0 սմ-անոց անցք է բացվել, որի ներքին մակերեսը հարթեցվել է: Դրա շնորհիվ, քաշող կենդանիների միջոցով տեղափոխման ժամանակ անցքերին ամրացված ճուղանները չեն մաշվել ու կտրվել:⁷ Քարաբեկորի «բրգաձև» կառուցվածքը կարևոր դեր է ունեցել: Մեծ դամբանախցերի վերին մակերեսները կրճատելու և համեմատաբար փոքր սալեր տեղադրելու համար անհրաժեշտ է եղել յուրահատուկ ծածկի՝ «կեղծ թաղի» կառուցում: Դրա համար մեծ դամբանախցերի երկայնական, իրար զուգահեռ երկու կողմերից միմյանց դեմ հանդիման տեղադրվել են երկարավուն (մինչև 2,5-4,0 մ երկարությամբ), զանգվածեղ (2,0-4,0 տոննայից ոչ պակաս քաշով) այնպիսի քարաբեկորներ, որոնք վերնամասում համեմատաբար բարակ են ու նեղ, իսկ հիմքի հատվածում՝ ծավալուն ու ծանր: Նման կառուցվածքի շնորհիվ դրանք մի կողմից կրճատել են դամբանախցի վերնամասի թռիչքը, իսկ մյուս կողմից՝ իրենց վրա տեղադրված ծածկասալերի ծանրության տակ չեն շրջվել դամբանախցի մեջ: Ավելին. Շարի մեջ տեղադրված յուրաքանչյուր քարաբեկորի վերնամասի անցքին կապված պարանով հնարավոր է եղել դրան տալ առավել նպաստավոր դիրք տեղադրվելիք համեմատաբար փոքր ծածկասալերը պահելու համար: Նման տարածամանակյա, անցքավոր մեզալիթներ պահպանվել են նաև տարածաշրջանի այլ հնավայրերում (Մեծամոր, Հարժիս, Բրուն, Աղիտու, Որոտնավանք, Սիսիան, Ելփին, Չեզարե-Սուլեմա, Բշխանասար, Նորատուս, Ներքին Գետաշեն և այլն):

⁷ Փիլիպոսյան-2016, էջ 30: Փիլիպոսյան-2017, էջեր 190, 181-199:

Ձորաց քարերի հնագիտական արշավախմբը 2014-2018 թթ. ուսումնասիրեց հենց այդպիսի կառուցվածք ունեցող այն հայտնի դամբարանը, որը մի խումբ ոչմասնագետ հետաքրքրվողներ փորձում են կապել «աստղադիտարան» երևույթի հետ: Իրականում, խնդրո առարկա դամբարանային կառույցն օղակված է շուրջ 18,0 մ տրամագիծ ունեցող կրովեխով, որի կենտրոնում մոտ 7,0 մ երկարությամբ և 3,0 մ լայնքով դամբանախուցն է (20 մ² մակերեսով), կողմնորոշված՝ արևմուտքից արևելք: Կրովեխի ներքին տարածքը՝ մինչև դամբանախցի պատերը, ամբողջությամբ ծածկված է մանր քարերից կիտված գրահով (*Աղ. II, նկ. 1*): Նրա շրջանաձև շարի արևմտյան եզրից սկիզբ էր առնում մոտ 1,0 մ լայնք, շուրջ 7,0 մ երկարություն և միջինը՝ մոտ 1,5 մ խորություն ունեցող, քարաշար, ստորգետնյա դրոմոս (մուտք), որը, ձգվելով դեպի արևելք, միանում է արևմուտք - արևելք ուղղվածություն ունեցող դամբանախցին (*Աղ. II, նկ. 2*): Հնում այն պարբերաբար ենթարկվել էր թալանի ու վերաթաղման:⁸ Պեղումների արդյունքում պարզ դարձավ, որ խնդրո առարկա դամբարանային համալիրը կառուցվել է միջինբրոնզիդարյան դամբարանի վրա կամ դրա տեղում: Այդ են փաստում դամբանախցի հատակին և անգամ պատերի քարերի ստորին շարքի տակ բացված սևան-արցախյան (մ.թ.ա. XVIII-XVII դդ.) գունազարդ անոթների բազմաթիվ բեկորները:

Այս նյութերից մոտ 0,35-0,40 մ վեր հայտնաբերվեցին ուշ բրոնզի շրջափուլին (մ.թ.ա. XV-XIII դդ.) վերաբերող սև-փայլեցրած խեցեղենի թերի պահպանված օրինակներ, որոնք խառնված էին նույն վիճակում գտնվող երկաթիդարյան (մ.թ.ա. XI-IX դդ.) գտածոների հետ: Նման տարածամասնակյա նյութերի առկայությունը վկայում էր, որ առնվազն 3 անգամ՝ մ.թ.ա. XVIII-XVII դդ., մ.թ.ա. XV-XIII դդ. և մ.թ.ա. XI-IX դդ. նույն դամբանախցում վերաթաղումներ են իրականացվել (*Աղ. III, նկ. 1-9*): Երկաթիդարյան նյութերն ամենամեծաքանակն են: Դրանցում հանդիպում են և՛ վաղերկաթիդարյան, և՛ երկաթի լայն տարածման շրջանի տարատեսակ կոտրտված օրինակներ:

Հետագա պեղումներն ի հայտ բերեցին մ.թ.ա. I հազ. առաջին կեսով թվագրվող բրոնզե ապարանջանների, մագլիսիլի և երկաթե տարբեր առարկաների մասեր: Վերջնական պեղումների արդյունքում, 3,15 մ խորության վրա բացվեցին մ.թ.ա. I հազ. կեսով թվագրվող գունազարդ եզակի սավորի, իրանի միջնամասում ներձկումով օձագլուխ բրոնզե ապարանջանների, սարդիոնե, ապակե ուլունքերի և հնամարդաբանական նյութերի (2 տղամարդ, 3 կին և 1 երեխա) բազմաթիվ մնացորդներ:⁹ Դատելով հայտնաբերված նյութերի նախնական հոտազոտման արդյունքներից՝ դամբանախցի հատակին մ.թ.ա. VI-IV դդ. ևս վերաթաղում է իրականացվել (այս դեպքում՝ մանկան):

Դամբանախցի մաքրման ու պեղման ընթացքում ձեռք բերվեց մի կարևոր տեղեկություն ևս: Խցից խառնված հողաշերտի մեջ հայտնաբերվեցին նաև զարգացած միջնադարին (XI-XIII դդ.) վերաբերող խեցեղենի և մուգ կապտավուն ապակուց պատրաստված ապարանջանի բեկորներ:¹⁰ Առայժմ միակ ենթադրությունն այն է, որ միջնադարում՝

⁸ Piliposyan-2016, pp. 104-105:

⁹ Հնամարդաբանական նյութերի ուսումնասիրություններն իրականացրել են պ. գ. թ., հնամարդաբան Ռուզան Մկրտչյանը և հնամարդաբան Հասմիկ Միմոնյանը:

¹⁰ Փիլիպոսյան Ա., Փահլևանյան Կ., Ավագյան Ա., Ձորաց քարեր, Երևան, 2019, էջեր 3-48:

հավանաբար սելջուկյան կամ մոնղոլական արշավանքների ժամանակ, գուցե նաև դրանցից հետո էլ, նման մեծ, գետնափոր (դրսից քիչ նկատելի) դամբանախցերը, հավանաբար, ժամանակավոր ապաստարան և/կամ թաքստոց են ծառայել տեղի բնակիչների համար:

Ջորաց քարերում նկատվում է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս: Բանն այն է, որ բնակավայրի և դամբարանադաշտի արևելյան կողմի ողջ երկարությամբ՝ քարափի եզրից (հարավից) սկսվում և գրեթե ուղղաձիգ գծով դեպի հյուսիս՝ մինչև բնակավայրի կիկլոպյան պարսպաշարն է ձգվում ու այնտեղից դեպի քարափի հյուսիսային եզրը շարունակվում ուղղահայաց դիրքով իրար կից կամ որոշ հեռավորությամբ կանգնեցված, տարբեր բարձրության (0,5–3,5 մ), ծավալի (0,2-2,6 մ³) ու ծանրության (0,5-4,5 տ) քարաբեկորների շարք: Դրանց մի մասի համեմատաբար բարակ վերնամասերին դարձյալ առկա են երկկողմանի մշակման եղանակով բացված անցքեր: 2017 թ. հոկտեմբերին պեղման աշխատանքներ սկսվեցին նաև հենց այդ օրթոստատ դիրքով կանգնեցված քարաբեկորների շարի հատվածում: Արդյունքում բացվեց դրանց տակ առկա, հուշարձանի արևելյան եզրով հարավից հյուսիս ձգվող հենապատի շուրջ 2,50 մ բարձրությամբ լավ պահպանված շարվածքի մի հատված (Աղ. IV, նկ. 1): Դրա շարի միջից և մերձակայքից հայտնաբերված խեցու բեկորները հիմնականում վերաբերում են մ.թ.ա. VII-V դդ., ինչը թույլ է տալիս նախնական կարծիք հայտնել վերջինիս կառուցման ժամանակաշրջանի մասին:¹¹ Հյուսիսից հարավ ձգվող հենապատը տեղ-տեղ համարվել է կցակառույցներով, որոնք, հավանաբար, ավելի ամուր ու կայուն են դարձրել շարք: Այսուհանդերձ, առայժմ դժվար է հաստատապես ասել, թե երբ և ինչ նպատակով է շարվել այն: Նախնական տպավորությունն այնպիսին է, որ հենապատը կառուցվել է պաշտպանական կամ ռազմավարական հրատապ խնդիրների լուծման նպատակով, և դրանում ուղղահայաց դիրքով տեղադրված մեծ քարաբեկորները որոշակի դեր են ունեցել: Թերևս վերջիններիս միջնատարածքների դատարկ հատվածները շարվել են մանր քարերով և հարավից հյուսիս ձգվող ընդհանուր կառույցը հենապատի հետ միասին վերածվել է պարսպի (Աղ. IV, նկ. 2): Թե ինչ է սահմանազատել կամ պահպանել հնավայրի ողջ արևելյան՝ հակառակորդի համար առավել մատչելի հատվածի երկայնքով ձգվող այդ պարիսպը, առայժմ դժվար է ասել, սակայն փաստ է, որ հենց դրա մաս են կազմել դամբարանադաշտի հին թաղման կառույցների վրայից վերցված հսկայական անցքավոր ծածկասալերը:

Եզրահանգում. Ասվածից հետևում է, որ հարավից հյուսիս ձգվող Ջորաց քարեր հնավայրի անցքավոր հսկա քարաբեկորների շարքը լավագույն դեպքում պետք է ստեղծված լինի մ.թ.ա. I հազ. երկրորդ քառորդից ոչ շուտ, կոնկրետ կիրառական նշանակություն է ունեցել և կապ չունի «աստղադիտարան» հասկացությանն ու երևույթին, առավել ևս դրա «7000-ամյա գոյությանն» առնչվող երևակայական մեկնաբանությունների հետ: Հակառակ պարագայում անցքավոր քարերի դասավորությունը գոնե պետք է լիներ ոչ թե ուղղաձիգ, այլ շրջանաձև: Հանգամանք, որ թերևս հնարավորություն

¹¹ Փիլիպոսեան-2019, էջ 857:

կտար «աստղադիտարկման առումով» ընդգրկելու ողջ երկնակամարը: Ուստի, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, խիստ դժվար է պատկերացնել, որ դրանք բոլորն էլ առնչվել են աստղադիտարկման գործընթացների հետ: Հակառակ պարագայում, հետևելով ոչմասնագետների վառ երևակայությանը, ստիպված ենք համակերպվել այն մտքին, որ Սյունիքի բրոնզիդարյան-երկաթիդարյան մեր նախնիներն այնքան ավելորդ ժամանակ ու այնպիսի անդիմադրելի ցանկություն են ունեցել, որ ուր և երբ պատահել է (անգամ կողք կողքի) «աստղադիտարաններ» են կառուցել...

Ձորաց քարերը Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի պատմամշակութային ժառանգության եզակի հուշարձաններից է և դեռևս չպեղված մեծաքանակ նյութեր ունի անփոփոխ իր տարածքում: Ուստի անհրաժեշտ է հնավայրի ուսումնասիրությունն իրականացնել քայլ առ քայլ՝ համակողմանի, հիմնավոր և հույժ մասնագիտական սկզբունքով: Այս պարագայում, հնավայրը, իրավամբ, կարող է դառնալ կարևորագույն հիմնախարհիս ոչ միայն Հին Հայաստանի, այլև ողջ Մերձավոր Արևելքի և հարակից շրջանների բրոնզիդարյան-երկաթիդարյան մեգալիթյան հուշարձանների ուսումնասիրության գործում:

Աղ. 1



Աղ. II



1.



2.

Աղ. III



1



2



3



4



5



6



7



8



9

Աղ. IV



1



2

**ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК
МЕГАЛИТИЧЕСКОГО ПАМЯТНИКА ЗОРАЦ КАРЕР (2014-2018 гг.)**

Փիլիպոսյան Ա. Տ.

Ключевые слова: *Армянское нагорье, Зорац Карер, мегалиты, поселение, могильник, Древний Ближний Восток.*

Зорац Карер - уникальный мегалитический памятник на юге Республики Армения. Он также известен под названиями Дик-дик и/или Циц-циц карер (Торчащие камни), Карезорк (Каменное войско). Согласно древним преданиям и фольклору, на территории памятника под огромными грудями камней захоронены военачальники, а под большими валунами, воздвигнутыми вертикально – воины. Памятник расположен в 3 км к северу от города Сисиан Сюникской области РА, на плато на высоте 1770 м над уровнем моря, на левом берегу реки Воротан. Он занимает площадь около 10 га (табл. I).

Местоположение памятника, его общий вид, обнаруженные на месте остатки материальной культуры, особенно множество мегалитов, возведенных вертикально с севера на юг, долгое время находились в центре внимания многих специалистов. Результаты исследований показывают, что на этом месте было хорошо укрепленное древнее поселение с большим могильником.

Поселение занимает северную часть памятника и состоит из прямоугольных построек разной величины, на территории которых раскопки пока не проводились. Остатки циклопической оборонительной стены частично сохранились на ее южной и западной сторонах. По археологическим материалам, собранным с поверхности памятника, можно сделать вывод, что самый ранний слой древнего поселения относится к началу II тыс. до н. э. Судя по результатам раскопок, в восточной части древнего памятника, для защиты поселения от внезапных набегов, из огромных базальтовых плит с отверстиями в верхней части в VII-V веках до н.э. была построена каменная стена высотой около 3,0 м, протянувшаяся с севера на юг около 350 м (табл. IV, рис. 1, 2).

Могильник расположен в южной части памятника и включает около 70-ти больших и средних каменных гробниц, основная часть которых была разграблена еще в древности (табл. II, рис. 1, 2). Тем не менее, начатые с 2014 г. раскопки показывают, что самые ранние захоронения относятся к среднему бронзовому веку (XVIII-XVI вв. до н.э.), а поздние – к ахеменидскому периоду (VI-IV вв. до н.э.) (табл. III, рис. 1-9).

Остатки средневековых предметов быта, найденные в каменных камерах некоторых гробниц (XI-XIII вв.), дают возможность предположить, что часть населения окрестных поселений укрылась в этих подземных сооружениях во время разрушительных нашествий кочевых племен (сельджуков и монгол).

Приведенные выше факты подтверждают, что поселение Зорац Карер имеет важную роль в деле комплексного изучения мегалитических памятников эпохи бронзы и железа Кавказа, да и всего Древнего Ближнего Востока.

**PRELIMINARY RESULTS OF EXCAVATIONS AT THE MEGALITHIC
SITE ZORATS KARER (2014-2018)**

Piliposyan A. S.

Key words: *Armenian Highland, Zorats Karer, megaliths, settlement, cemetery, Ancient Near East.*

Zorats Karer is a unique megalithic monument in the south of the Republic of Armenia. It is also known as the Dik-dik and/or Tsits-tsits Karer (Protruding stones), Karezork (Stone army). According to ancient legends and folklore, on the territory of the monument, military leaders were buried under huge piles of stones, and soldiers were buried under large boulders erected vertically. The monument is located 3 km north of the city of Sisian, in Syunik province of the Republic of Armenia, on a plateau at an altitude of 1770 m above sea level, and on the left bank of the Vorotan River. It covers an area of about 10 hectares (tab. I).

The location of the monument, its general appearance, and the remains of material culture found at the site, especially the many megaliths erected vertically from north to south, have long been the focus of many specialists. The research results show that there was a well-fortified ancient settlement with a large cemetery at this place.

The settlement occupies the northern part of the monument and consists of rectangular buildings of various sizes, on the territory of which no excavations have yet been carried out. Remnants of the Cyclopean defensive wall are partially preserved on its southern and western sides of the settlement. According to archaeological materials collected from the surface of the monument, it can be concluded that the earliest layer of the ancient settlement dates to the beginning of the 2nd millennium BC. Judging by the results of excavations, in the eastern part of the ancient monument, to protect the settlement from sudden attacks, from huge basalt slabs with holes in the upper part, in the 7th-5th cc. BC, a stonewall was built, stretching from north to south for about 350 m (tab. IV, fig. 1, 2).

The cemetery is located in the southern part of the monument and includes about 70 large and medium-sized stone tombs, most of which were plundered in antiquity (tab. II, fig 1, 2). Nevertheless, excavations begun in 2014 show that the earliest burials date back to the Middle Bronze Age (XVIII-XVI cc. BC), and the later ones - to the Achaemenid period (VI-IV cc. BC) (tab. III, fig. 1-9).

The remains of medieval household items (XI-XIII cc.) found in the stone chambers of some tombs suggest that part of the population of the surrounding settlements took refuge in these underground structures during the devastating invasions of nomadic tribes (Seljuks and Mongols).

The above facts confirm that the Zorats Karer settlement has an important role in the comprehensive study of the Caucasus and the entire Ancient Near East megalithic monuments of the Bronze and Iron Ages.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո լ ն

1. Ադոնց-1972՝ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. Ավետիսյան, Գնունի, Բորոխյան, Սարգսյան -2015՝ Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Սարգսյան Գ., Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան: ԵՃ հրատ., ISBN 978-8084-1988-9:

3. Բարխուդարյան-1960՝ Բարխուդարյան Ա., Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ // «Դիվան հայ վիմագրության» մատենաշար, պրակ II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
4. Գայսերյան-1986՝ Գայսերյան Վ., Արգիշթե II-ի Միսիանի արձանագրությունը // «Լրաբեր», № 6, էջեր 67-79:
5. Եսայան-1972՝ Եսայան Ա., Չանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները // «Լրաբեր», № 4, էջեր 64-73:
6. Լալայան-1931՝ Լալայան Յ., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան:
7. Լիսիցյան-1969՝ Լիսիցյան Ստ., Չանգեզուրի հայերը, Երևան, «Լույս» հրատ.:
8. Խնկիկյան-1984՝ Խնկիկյան Օ., Միսիանի գորաքարերը, «Հայաստանի բնությունը», № 4, Երևան:
9. Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան-1991՝ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՀ հրատ.:
10. Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան-2001՝ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան: ԵՀ հրատ.:
11. Հասրաթյան-1985՝ Հասրաթյան Ա., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան: Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ.:
12. Հարությունյան-1979՝ Հարությունյան Ն., Արգիշտի II-ի նորահայտ սեպագիրը // ՊԲՀ, 3, էջեր 93 - 104:
13. Հարությունյան-1992՝ Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» հրատ.:
14. Հերունի-1998՝ Հերունի Պ., Քարահունջ – հնագույն աստղադիտարան Միսիանում // «Գարուն», 5, էջեր 87-93, Երևան:
15. Ղանալանյան-1969՝ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան:
16. Փիլիպոսյան-2016՝ Փիլիպոսյան Ա., Սարդուրի II-ի տարեգրությունը որպես Միսիանի տարածաշրջանի մ.թ.ա. VIII-VII դդ. պատմական որոշ գործընթացների վերակազմության սկզբնաղբյուր // «Հայաստանի հնամարդաբանության և հնաժողովրդագրության հարցեր» միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, էջեր 18-20: ISBN 978-9939-867-09-0.
17. Փիլիպոսյան-2016՝ Փիլիպոսյան Ա., Չորաց քարեր հնավայրը // «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք, 2, Երևան, էջեր 24-43: «Հայկարիլ» հրատ., ISSN 1829-4707, :
18. Փիլիպոսյան-2017՝ Փիլիպոսյան Ա., Չորաց քարե^որ, թե^ո Քարահունջ, հնագիտական հուշարձան^ո, թե^ո հորինյալ «աստղադիտարան» // Արևելագիտությունը Հայաստանում - 3, «Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները» (Ժողովածուն նվիրված է ակադեմիկոս Գ. Սարգսյանի ծննդյան 90 ամյակին), Երևան, էջեր 181-189, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: ISBN 978-5-8080-1292-9.
19. Փիլիպոսեան-2019՝ Փիլիպոսեան Ա., Նոր Պեղումներ Չորաց Քարեր Հնավայրում//Հայկազեան Հայագիտական Հանդես, հատոր 39, Պեյրուֆ, էջեր 851-860: Բեյրութի Հայկազյան համալսարանի հրատ.: ISSN 2518-9697.
20. Փիլիպոսյան, Ավագյան-2016՝ Փիլիպոսյան Ա., Ավագյան Ա., Չորաց քարեր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
21. Փիլիպոսյան, Փահլևանյան, Ավագյան-2019՝ Փիլիպոսյան Ա., Փահլևանյան Վ., Ավագյան Վ., Չորաց քարեր, Երևան, «Հայրապետ» հրատ.:
22. Арутюнян-1983: Арутюнян Н. Новая урартская надпись из Сисиана // сб. «Древний Восток». 4. Ереван. сс. 195-229.
23. Арутюнян-2001: Арутюнян Н. Корпус урартских клинообразных надписей. Ереван. Изд. “Гитутюн” НАН РА. ISBN 5-8080-0476-4.
24. Геруни-1998: Геруни П. Доисторическая каменная обсерватория Карахундж-Карениш // «Доклады НАН Армении». 4. Ереван. сс. 307-328. Изд. АН Арм. ССР.

25. Меликишвили-1960: Меликишвили: Г. Урартские клинообразные надписи. М. Изд. АН СССР.
26. Меликь-Шахназаровъ-1892: Меликь-Шахназаровъ Е., Гошунъ-Дашъ // «Сборникъ материаловъ для описанія мѣстностей и племень Кавказа». Вып. XIII. Тифлисъ. сс. 124-127.
27. Парсамян-1985: Парсамян Э. О возможном астрономическом назначении мегалистических колец Ангелакота // «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ», պր. 57, Երևան:
28. Piliposyan-2016: Piliposyan A. Zorats Karer. Megalithic Site in Soutern Armenia, in “Aegean World and Soutern Caucasus // Cultural Relations in the Bronze Age”, International Workshop. September 23-25. Gorgia. Tbilisi. pp. 104-105. 101-111. Printing House “Mtsignobari”. ISBN 978-9941-465-48-2.
29. Piliposyan-2019: Piliposyan A., New Ways of Etymologizing Certain Fragments of the Cuneiform Inscription of Tanahat, in: “Over the Mountains and Far Away, Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday” (Eds. by Pavel S. Avetisyan, Roberto Dan and Ervand H. Grekyan), “Archaeopress Archaeology”. Oxford. pp. 439-446 “Archaeopress Publishing” LTD.
30. Xnkikyan-2002: Xnkikyan O., Syunik´ During the Bronze and Iron Ages, Barrington. Mayreni Publishing. ISBN 0-931834-03-2.

Ընդունվել է՝ 20. 07. 2021
Գրախոսվել է՝ 01.10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Աշոտ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ,
E- mail: piliposyan@yahoo.com